



Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմ  
*Western Diocese of the Armenian Church of North America*

Ի՞ՆՉ ԵՆ  
ՀԱՆԳՈՒՑԵԱԼԻ  
ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ  
ՕՐԵՐԻ ԻՄԱՍՏՆԵՐԸ

(ԱՅԳՈՒՅ, ԵՕԹՆՕՐԷՔ, ՔԱՌԱՍՈՒՆՔ, ՏԱՐԵԼԻՑ)



What is the meaning of  
the remembrance days  
for the dead?

(Aykouts, 7 days, 40 days, 1 year)

Burbank  
2022

Ազնիւ մեկենասութեամբ՝

ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԾՈՆ ԵՒ ԱԼԻՍ ԻՓՃԵԱՆ



*This publication was made possible  
through the generous contribution of*

MR. AND MRS. JOHN AND ALICE IPJIAN

Պատրաստեց՝

ԳԵՈՐԳ ՍԱՐԿԱԿԱԳ ԳԵՈՐԳԵԱՆ

*Prepared by*

DEACON GEVORK GEVORKIAN

## ԻՐՁ ԵՆ ՀԱՆԳՈՒՑԵԱԼԻ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐԻ ԻՄԱՍՏՆԵՐԸ

(ԱՅԳՈՒՑ, ԵՕԹՆՕՐԷՔ, ՔԱՌԱՍՈՒՆՔ, ՏԱՐԵԼԻՑ)

*«Ո՛վ քրիստոսասէր իշխան, անմոռաց յիշի՛ր քո ննջեցեալներին եւ խնա՛մք տար նրանց ողորմութեամբ ու Պատարագներով, որովհետեւ ննջեցեալների ակնկալութիւնն ու յոյսն Աստուած է, ինչպէս եւ մեր, որովհետեւ չկայ որեւէ մարդ, որ կարողանայ առանց մեղքի դուրս գալ այս աշխարհից: Քանի որ ննջեցեալները մինչեւ եօթ սերունդ մտում են՝ պաղատելով Աստծուն եւ ակնկալելով, որ իրենց ազգից յայտնուի բարի, սուրբ եւ ողորմած մի մարդ, կամ սուրբ քահանայ, որ կը ջանայ Պատարագներով եւ ողորմութեամբ ազատել իրենց տանջանքների սպառնալիքից, որոնք պատրաստուած են իրենց համար: Իսկ ննջեցեալների յիշատակը, որը կատարում ենք ողորմութեամբ, Պատարագով եւ աղօթքով, հրեշտակը տանում եւ դնում է ննջեցեալի առաջ, որից նրանք յոյժ զուարճանում եւ ուրախանում են»:*

Վարդան Այգեկցի, «Խրատներ»,  
Գանձասար, Երեւան, 1999, էջ 38:

## ԱՅԳՈՒՑ

Հայ Եկեղեցու թաղման արարողութեան հիմքում ընկած է թաղման երկրորդ օրուայ առաւօտեան թարմ գերեզմանի մօտ հանգուցեալի յիշատակութիւնը, որ կոչուում է «այգուց»: Ըստ հին ձեռագրերի, այն կոչուում էր նաեւ «այգալացն» ու խորհրդանշում է Աւետարանի Յարութեան հատուածը, երբ կանայք այգաբացին գնում են Քրիստոսի գերեզմանը օծելու եւ տեղը դատարկ են տեսնում: Տիրոջը գերեզման դնելուց յետոյ առաքելները սուգի մեջ էին, իսկ առաւօտեան իւղաբեր կանայք արիաբար տարածեցին Յարութեան աւետիսը:

Ինչո՞ւ համար ենք երկրորդ օրը գալիս գերեզման: Սբ. Գրիգոր Տաթեւացին այսպէս է մեկնաբանում. «Նախ սուգի չափը սովորեցնում է մեզ սգալ մինչեւ երեկոյ, եւ առաւօտեան ուրախանալ, ինչպէս ասուած է: Այսպէս էլ երկրորդ օրը նախ կանայք պետք է գան գերեզման եւ յետոյ տղամարդիկ. ու բոլորը ուրախանան հոգեպէս, ինչպէս որ իւղաբեր կանայք նախ եկան գերեզման ու տեսան յարուցեալ Քրիստոսին, եւ յետոյ առաքեալները եկան: Երեկ մեծ ցաւ զգացինք մեռեալի համար, եւ այդ մեծ վիշտ էր Աստծու համար, իսկ այսօր բաւարարուած ենք գալիս գերեզման եւ գոհութիւն ենք յայտնում Աստծուն» (Սբ. Գրիգոր Տաթեւացի, Չմերան Հատոր, Քարոզ վասն Ննջեցելոց այգուց 51):

Եկեղեցւոյ սուրբ վարդապետների համաձայն, առաւօտեան գերեզմանի մօտ հանգուցեալի յիշատակութեան համար շատ պատճառներ կան.

- Նախամարդու ելքը փափկութեան դրախտից երեկոյեան եղաւ, երբ արեւը մայր մտաւ, ու կարծեցին, թէ խաւարն իրենց առ միշտ ծածկեց, բայց յաջորդ առաւօ-

տեան՝ արեւի ծագելով, իրենց ուրախութիւն եղաւ: Երեկոյեան Էր Նրանց պատուագրկումը, իսկ առաւօտեան՝ մխիթարուեցին Աստծու հրեշտակով, որ ակտեց իրենց՝ Միաձնի գալուստը:

- Մարդն ունի երկու եռութիւն՝ հոգի ու մարմին: Երեկ թողութիւն ինդրեցինք մարմնի համար, իսկ այսօր՝ հոգու համար: Երեկ իրարու սգակից եղանք, իսկ այսօր իրար մօտ գալով՝ մխիթարում ենք միմեանց:

- Երեկոն՝ այս կեանքն Է. ովքեր այստեղ լաց են լինում, առաւօտեան՝ հանդերձեալում, ուրախ են լինելու: Թաղման խորհուրդը երեկ Էր, իսկ այս առաւօտ Է յարութեան խորհուրդը: Դրա համար Նորից ենք գալիս գերեզման, որպէսզի խաղաղութեամբ անցնենք խաւարային իշխանութիւնից ու մեր դատաստանը լինի քաղցրութեամբ:

- Եզեկիայի հիւանդութիւնը երեկոյեան մահամօտ Էր, իսկ առաւօտեան Եսայի մարգարէն եկաւ ու բերեց կեանքի առաւօտ, եւ տիրեց ուրախութիւն: Եւ Եսայի մարգարէն ասում Է. «Խաւարի մէջ Նստած Ժողովրդի համար լոյս ծագեց»:

- Երեկոյեան տրտմութեամբ քնեցին Ղազարոսի քոյրերը: Նրանց համար ուրախութիւն եղաւ առաւօտեան:

- Տէր Յիսուսին գերեզման ղնելուց յետոյ առաքելները սգալով քնեցին, եւ առաւօտեան եկան կանայք, որոնք բերին Յարութեան ակտիսը եւ ուրախացան:

- Ինչպէս որ սերմանում ենք սերմը երկրի տակ թաղելով ու ջրով ջրում ենք այն, այդպէս Էլ իմացական սերմը երեկոյեան թաղեցինք հողի տակ: Այսօր դարձեալ հոգեւոր ջրով ենք ջրում, որպէսզի պտղաբերի գարնանային յարութեան ժամանակ:

## ԵՕԹՆՕՐԷՔ

Եօթնօրէքը հաշուում են հանգուցեայի թաղման օրուանից: Նախկինում մինչեւ եօթներորդ օրն ամէն օր այցելում էին ննջեցեայի շիրիմին աղօթք անելու եւ աստիճանաբար հող էին անելացնում գերեզմանի վրայ: Եօթներորդ օրը, որ կոչւում է՝ եօթնօրէք, համապատասխանում է երկրային եօթներորդ օրուան: Այս օրուայ յիշատակութիւնը եւ գերեզման այցելելը բազում խորհուրդներ ունեն: Եօթնօրէքը խորհրդանշում է հետեւեալը.

- Աստուած վեց օրերի ընթացքում է ստեղծել երկիրը, երկինքը, ակարտել Իր արարչագործութիւնը եւ «Իր կատարած բոլոր գործերից յետոյ՝ եօթներորդ օրը, հանգստացաւ: Աստուած օրհնեց եօթներորդ օրը եւ սրբագործեց այն» (Ծննդ. 2, 2-3): Եւ այդ խորհրդով էլ Եկեղեցու կողմից սահմանուել է եօթնօրէքի խորհուրդը, որով հանգուցեայի մարմինն իր վերջնական հանգստութիւնն է գտնում հողում:

- Ադամից յետոյ եօթներորդը՝ Ենովքը, կենդանի մարմնով երկինք բարձրացաւ:

- Յակոբը, ասորիների Միջագետքից՝ Բաբելոնից, վեց օր փախստական ընթացաւ եւ եօթներորդ օրը հանգստացաւ Գալլաադ լեռան վրայ (Ծննդ. 31, 20-23): Յակոբի ելքը Բաբելոնից, իր բոլոր ինչքերով հանդերձ նշանակում է մեր ելքը այս աշխարհից ամենայն բարեգործութեամբ: Իսկ ասորի Լաբանն իր խմբով դեւերի գունդն են, որ հոգու ետեւից գնում են վեց օր, մինչ հոգին եօթներորդ օրը հասնում է հոգիների օթեւանը:

- Եօթնօրէքը խորհրդանշում է Սուրբ Հոգու եօթը շնորհները (իմաստութիւն, հանճար, խորհուրդ, զօրութիւն, գիտութիւն, աստուածայաշտութիւն, Աստծու երկիւղ):

- Եկեղեցու եօթը խորհուրդները (Մկրտութիւն, Դրոշմ, Ապաշխարութիւն, Ս. Յաղորդութիւն, Ձեռնադրութիւն, Պսակ Ամուսնութեան, Վերջին օծում կամ կարգ հիւանդաց):

- Քրիստոնեաների եօթը առաքինութիւնները (խոնարհութիւն, եղբայրասիրութիւն, հեզութիւն, աշխատասիրութիւն, ողորմածութիւն, ժաժկալութիւն, ողջախոհութիւն):

- Եօթը մահացու մեղքերը (հպարտութիւն, նախանձ, բարկութիւն, ծուլութիւն, ագահութիւն, որկրամոլութիւն, բղջախոհութիւն):

- Եօթներորդ օրը սուրբ Է եւ հանգստի օր, որը խորհրդանշում է հոգու յաւիտենական հանգիստն Աստծու արքայութեան մէջ: Տէրը շաբաթուայ վեցերորդ օրը մարմնով մտաւ գերեզման ու լուծարեց ապականութիւնը, եւ հոգով իջաւ դժոխք ու ազատեց գերեալներին, իսկ կիրակի՝ եօթերորդ օրը Յարութիւն առաւ եւ յարութիւն տուեց ազատուած գերեալներին ու երկինք տարաւ: Այդ պատճառով այսօր մենք հայցում ենք, որպէսզի Տէրը լուծարի ննջածի ապականութիւնը, ազատի նրա հոգին օդային իշխանութիւնից եւ վերջին օրը նրան յարութիւն շնորհելով՝ յաւիտենական կեանքին արժանացնի: Քանի որ Տէրը կիրակի օրը յարութիւն առաւ, նաեւ այդ օրն աղօթում ենք ննջեցեալների համար:

Եօթնօրեքի աղօթքներում Տիրոջից խնդրում ենք, որ Նա ննջեցեալի հոգին խառնի մարտիրոսների լուսեղէն գնդերին եւ դատաստանի օրը ննջեցեալը չամաչի ատենում: Նաեւ խնդրում ենք, որ դէւերը իշխանութիւն չունենան նրա հոգու վրայ, եւ բարի հրեշտակի ուղեկցութեամբ Նա հանգչի արդարների կայաններում: Խնդրում ենք, որ-

պէսզի Տէրն Իր բարեգթութեամբ անտեսի ննջեցեալի յան-  
ցանքները, նրան տայ համարձակութիւն՝ կանգնելու Աստ-  
ծու առջեւ եւ դատաստանի մէջ չմտնի նրա հետ:

## **ՔԱՌԱՍՈՒՆՔ**

Քառասունքը կամ քառասնօրէքը հաշուում են հանգու-  
ցեալի մահուան օրուանից՝ այդ օրը համարելով առաջին  
օր եւ քառասուներորդ օրը նշում քառասունքը: Մարմնից  
բաժանուելուց յետոյ, քառասուներորդ օրը արդար Դա-  
տաւորը որոշում է նրա գործերի եւ երկրային ապրած  
կեանքի արժանի օթեւանը: Քառասունք կատարելու սո-  
վորութիւնն էլ անշուշտ ունի իր իմաստը: Քառասունքը  
խորհրդանշում է հետեւեալը.

- Յիսուսի՝ յարութիւնից յետոյ քառասուն օր երկրի  
վրայ գտնուելը, յետոյ Համբարձումը Իր Հօր մօտ:

- Նոյի օրով քառասուն օր ու քառասուն գիշեր երկրի  
վրայ անձրեւ տեղալը եւ երկրի վրայ բոլոր արարածների  
ոչնչացուելը:

- Հրեաների՝ անապատում քառասուն տարուայ կե-  
ցութիւնը:

- Մովսէսի՝ Սինա լեռան վրայ Աստծու հետ քառասուն  
օր մնալը, որից յետոյ տասը պատուիրանները տրուեցին  
մարդկութեան:

- Յիսուսի՝ քառասուն օր ու քառասուն գիշեր ծոմա-  
պահութիւնը, երբ մեր փրկութեան համար սատանայի  
դէմ առաջին յաղթանակը տարաւ:

Հանգուցեալը քառասուն օրերի ընթացքում այցելում  
է դրախտային բնակավայրերն ու դժոխքի անդունդները՝  
դեռ չիմանալով, թէ որտեղ է իր մնալու տեղը: Սուրբ Մա-  
կարիոս Աղեքսանդրացուն հրեշտակն յայտնում է, որ



Եկեղեցում հոգեհանգիստի կարգը կատարում է այն պատճառով, որ Նախքան քառասունքը հանգուցեալին ցուցադրում են դրախտի գեղեցկություններն ու դժոխքի տանջանքներ, իսկ քառասուներորդ օրը նշանակում է այն բնակավայրը, որտեղ նա պիտի սպասի մեռելների յարութեանը, Քրիստոսի երկրորդ գալստեանն ու վերջին դատաստանին: Յետեւաբար, քառասուներորդ օրը ննջեցեալների համար երկնքում ամէն բան պարզ է դառնում, եւ նա իմանում է իր մալուկայանատեղին՝ մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը եւ Աստծու Դատաստանը: Սրա համար անհրաժեշտ է այդ քառասուն օրերի ընթացքում անդադար աղօթքների մէջ յիշել եւ ննջեցեալի համար ու Նրա անուկից ողորմութիւն բաշխել: Այս օրը կատարում է հոգեհանգիստ:

Քարասունքի մասին վկայում է յայտնի պատմագիր Եւսեբիոսը: Այս կարգը սահմանել է Փիլիպպոս առաքեալը: Նա իրեն պատժապարտ համարելով՝ պատուիրել էր իր յիշատակի համար քառասուն օր շարունակ Պատարագ մատուցել՝ սկսած իր վախճանի օրից, քանի որ Տիրոջից հանդիմանուել էր բարկացկոտութեան համար:

Սուրբգրային գրքերից Նաեւ գիտենք, որ հոգիները մարմնից ելնելուց յետոյ պատերազմում են օդային դէտերի հետ, ինչպէս Անտոն անապատականը եւ շատ այլ սուրբեր տեսան իրենց տեսիլներում: Եկեղեցին հաւատում է, որ մեղաւոր մարդը, եթէ մկրտուած է, եւ երբ մահուան ժամին արժանանում է ուղիղ եւ անարատ հաւատով խոստովանութեան, եւ վախճանից յետոյ քառասուն օր սուրբ Պատարագների միջոցով յիշատակում է Յիսուս Քրիստոսի առջեւ, ապա այդ կարգը կարող է վախճանուած հոգուն խորը անդունդից ազատելով:

## ՏԱՐԵԼԻՑ

Քրիստոնեության սկզբնական շրջանից ի վեր, կարելի է տեղ է գրաւում ննջեցեալի մահուան տարելիցի յիշատակութիւնը: Հանգուցեալի տարին հաշւում են մահուան օրուանից: Այդ օրը օգտակար է հոգեհանգստեան կարգ պատուիրել, քահանայ հրաւիրել գերեզման եւ աղօթքներով խնկարկել շիրիմը, քանի որ այստեղից պիտի լինի ննջեցեալի յարութիւնը:

Հայ քրիստոնեաները նահատակների անուան յիշատակումով հետեւում էին հին եկեղեցիների յարգալից սովորութեան: Հանգուցեալների ամենամեայ յիշատակութիւնն ամենուրեք եղել է ընդունուած պարտաւորութիւն: Բայց եկեղեցին ընդունել էր տարելիցը մէկ էական տարբերութեամբ: Նա նշում է ննջեցեալների ամենամեայ յիշատակումը ոչ թէ ժամանակաշրջանի հեթանոսների նման մահացողի ծննդեան, այլ նրա մահուան օրը, քանի որ, իր վարդապետութեան համաձայն, մահուան օրն Աստծու արքայութեան մէջ համարւում է իսկական ծնունդ: Մահուան օրը դառնում է ծննդեան օր Քրիստոսի մօտ՝ նոր կեանքով:

Տաղաւար տօներից յետոյ մեռելոցի Պատարագներն ու հոգեհանգիստները մեզ յիշեցնում են, որ կիրակի օրը Տէր Յիսուս Քրիստոս յարութիւն առաւ, իսկ երկուշաբթի օրն իր սուրբերին պիտի յարութիւն տայ, եւ ուրեմն խնդրում ենք, որ սուրբերի հետ նաեւ յիշի մեր ննջեցեալներին: Սբ. Գրիգոր Տաթեւացին նշում է. «Մենք պետք է ողորմենք եւ աղօթենք նրանց համար, ովքեր յոյսով ու հաւատով ննջեցին ի Քրիստոս, եւ աշխարհի սխալանքներից ինչ-ինչ բաներ մնացին նրանց մօտ: Նաեւ նրանց համար պետք է մեղքերի թողութիւն խնդրենք, ովքեր յանկարծակի մեռնելով պատերազմում, գազաններից, հողմից, կայծակից,

հիւանդութիւնից կամ այլ պատահարներից, չկարողացան խոստովանել իրենց մեղքերը եւ սուրբ պսակի արժանանալ»:

Ուստի եւ մեզանից իւրաքանչիւրը թող ջանայ ինքն իրեն վարժեցնել եռանդագին ու սրտաբուխ աղօթքի եւ բոլոր առաքինութիւնների: Հաւատով Տիրոջից խնդրենք, որ մեր ներքին մարդն այստե՛ղ իսկ դառնայ Աստծու փառքին հաղորդակից, որպէսզի մեր հոգին լինի հաղորդ Հոգու սրբութեանը. որպէսզի այստե՛ղ մաքրուելով ախտերի գարշութիւնից՝ յարութեան ժամին արժանի լինենք յաւիտենական հանգիստը վայելելու երկնային արքայութեան մեջ եւ ամպերով դէպի երկինք յափշտակուենք՝ ըստ այնմ, թէ **«պիտի յափշտակուենք-տարուենք ամպերի վրայից Տիրոջ առաջ եւ այդպէս Տիրոջ հետ պիտի լինենք: Ուրեմն, միսիթարեցէ՛ք միմեանց այս խօսքով»** (Ա Թես. 4, 16-17): Տերը թող ողորմի բոլոր ննջեցեալներին, յաւիտենական լոյսի ու փրկութեան արժանացնի եւ Քրիստոսի Յարութեամբ միսիթարի բոլոր սգաւոր եւ վշտացեալ հոգիները:

Հետաքրքիր է յիշել մի պատմութիւն, երբ սբ. Նիկողայոս Չմիւռնացի Սքանչելագործն այցելում է մի մանկան գերեզմանը: Նա մնացել էր քարայրում եւ ծովի ջուրը ծածկել այն: Մանկան մայրը կիրակի եւ շաբաթ օրերին քահանային տանում էր ալիւր, գինի եւ ձէթ, որպէսզի Պատարագի ժամանակ ննջեցեալների հետ միասին յիշատակի մանկանը: Իսկ մանկան պահապան հրեշտակը գալիս, քահանայի ձեռքից վերցնում էր այդ ամէնը եւ տանում դնում մանկան առաջ: Նա էլ վերցնելով՝ ուտում, խմում եւ բաւարարում էր այսքանով մինչեւ յաջորդ շաբաթ: Եւ երբ հակահոսանք տեղի ունեցաւ ու քարայրը բացուեց, մայրը տեսաւ, որ իր զաւակը առողջ է ու հետաքրքրում է, թէ ինչպէ՛ս եղաւ, որ ինքն առողջ մնաց:

Մանուկն էլ պատմում է այս ամենը: Այսինքն՝ այն ինչ մօր կողմից մատուցում էր Ս. Պատարագին մանկան հոգու փրկութեան համար, դարձել է կերակուր մանկան համար եւ մատուցուել նրան:

## **ԱՐԴԵՕՔ ՉԱՏԿԻ ԿԱՄ ԽԱՉԿԵՐԱՑԻ ՏՕՆԸ ԿՏՐՈՒՄ Ե ՅԱՆԳՈՒՑԵԱԼԻ ՔԱՌԱՍՈՒՆՔԸ**

Ժողովրդի մեջ բաւական տարածուած է հետեւեալ հարցը. «Ս. Չատիկը հանգուցեալի քարասունքը կտրո՞ւմ է, թե՛ ոչ»: Եկեղեցական ոչ մի տօն չի «կտրում» հանգուցեալի եօթնօրեքը, քառասունքը կամ տարելիցը: Եթէ քառասունքին մնացել է մի քանի օր ու մինչ այդ հանդիպում է Սուրբ Չատիկի կամ Խաչվերացի տօնը, ապա քառասունքը չի կտրուում: Այն «կտրում է» միայն սուգը: Ս. Չատիկն ննջեցեալի հարազատները դուրս են գալիս սգից, սակայն հարկ է այցելել ննջեցեալի շիրիմին: Մահուան օրուանից պէտք է հաշուել քառասուն օր եւ այդ օրը կատարել ննջեցեալի քառասունքը, անկախ Ս. Չատիկի համընկնելուց:

Եկեղեցու բոլոր հինգ տաղաւար տօների յաջորդ օրը Մեռելոց է՝ նուիրուած հաւատովի Քրիստոս ննջեցեալների յիշատակին: Մեռելոցի Ս. Պատարագը հաստատում է, որ Քրիստոս միայն ապրողների Ատուուածը չէ, այլ նաեւ ննջեցեալների: Պատարագի աւարտին կատարում է հոգեհանգիստ, յիշում են ննջեցեալների անունները, որից յետոյ հարազատներն այցելում են գերեզման: Ուրեմն, որեւէ բան չի կարող «կտրել» յիշատակութեան օրերի ընթացքը: Քառասուն օրերը շատ որոշակի են, ինչպէս քառասուն տարի ընտրեալ ժողովուրդը տառապեց անապատում եւ հասաւ աւետեաց երկիր, ինչպէս քառասուն օր

Յիսուս փորձուեց անապատում եւ յաղթեց սատանային, ինչպէս քառասուն օր Նոյի տապանը շրջեց ջրիեղեղի վրայով ու հասաւ Արարատի կատարը, եւ այդպէս էլ քառասուներորդ օրը ննջեցեալի հոգին հասնում է իր օթեւանը:

Քրիստոնեանէ՛ր, աղօթեցէ՛ք ձեր հանգուցեալ ազգականների համար, աղօթեցէ՛ք իւրաքանչիւր քրիստոնեայի համար, քանզի դրա շնորհիւ նրանց հոգիները հանգստութիւն կը ստանան:

*«Եւ արդ, այս իմանալով՝ անմոռաց յիշենք ննջեցեալներին, որքան որ մեր կարողութիւնն է, որովհետեւ Աստուած ուրիշների միջոցով էլ մեզ համար կը պատրաստի: Եւ Աստուած թող ծագեցնի Իր փառքի ու գիտութեան լոյսը քո հոգում, որ հոգ տանես քո եւ քո ննջեցեալների հոգիների համար, նաեւ ատես աշխարհի վայելքներն ու սիրես Աստծու փառքը, անմոռաց պահես քո աչքերի առջեւ Աստծուն ու Նրա ահագոյն Ատեանը, արդարների հանգիստն ու մեղաւորների տանջանքները, ինչպէս նաեւ բարին գործես այս կեանքում եւ հասնես երկնքի անճառ արքայութեանը Աստծու բոլոր սիրելիների հետ քո ննջեցեալներով հանդերձ մեր Քրիստոս Աստծուն շնորհներով, Ով օրհնեալ է միշտ Յօր եւ Սուրբ Յոգու հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:*

*Վարդան Այգեկցի, «Խրատներ»,  
Գանձասար, Երեւան, 1999, էջ 39:*

**ԱՐՈԹՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՆՁԵՑԵԱԼՆԵՐԻ  
ԵՒ ՄԱՆԱԻՎԱՆԴ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՒ  
ԵՐԱԽՏԱԻՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

*«Ո՛վ բազմագույն Աստուած, աղաչում եմ խնդրում եմ Քեզ մեր ազգի բոլոր հին ու նոր, հաւատքով ու յոյսով ի Քեզ ննջածների համար: Մանաւանդ, Քեզ մօտ ննջող իմ մարմնաւոր եւ հոգեւոր ծնողների, եղբայրների, քոյրերի, ազգականների, սիրելիների եւ բարեկամների, բարու մէջ կրթող հոգեւոր վարդապետների, ուսուցիչների, մեր բոլոր աշխատաւորների եւ երախտաւորների համար, որպէսզի Քո գալստեան մեծ օրը ողորմութեամբ յիշես եւ թողութիւն շնորհես նրանց բոլոր մեղքերին ու սխալներին եւ Քո աջակողմեան դասի սուրբերի հետ դասես ու թոյլ տաս լսել Քո երանաւէտ խօսքը, թէ՛ «Եկե՛ք, Իմ Հօր օրհնեալներ»: Եւ, ըստ մեր հանդէպ կատարած նրանց երախտիքների՝ մէկի փոխարէն բիւրապատիկ հատուցես նրանց հոգիներին, իսկ մեզ նրանց պարտքերից անպարտ դարձնես: Քեզ փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. Ամէն»:*

Սիմէօն Կաթողիկոս Երեւանցի,  
«Աղօթագիրք»,  
Երեւան, 2005, Ե գլուխ, էջ 57:

## What is the meaning of the remembrance days for the dead?

(Aykouts, 7 days, 40 days, 1 year)

*“O Christ-loving prince, without forgetting, remember your departed\* and take care of them with Your mercy, because the expectation and hope of the departed is God, as is for us because there is no one who can come out of this world without sin. Because the departed stay for seven generations, beseeching God and expecting from their tribe, a good, holy and merciful man, or holy priest, who will try with Sacrifices and with mercy save them from their suffering menace which has been prepared for them. As for the remembrance of the departed, who we remember mercifully with Badarak and prayer, the angel takes and places before the departed, so they delight with hope and joy.”*

Vartan Aykegtsi “Khradner,” Gandzasar,  
Yerevan, 1999 p. 38.

\*The actual word is “Those who are asleep,” which are those who have departed in this context.

### Aykouts

In the Armenian Church, following the burial service of an individual, on the morning of the second day, a remembrance takes place, which is called “Aykouts.” According to ancient manuscripts, it is also called “Aykalatsun,” symbolic of the Gospel account of the Resurrection, when the women went

to the open garden where they were to anoint the body of Christ in His grave but found the tomb empty. After they placed the Lord in His grave, the Apostles fell into mourning, and in the morning, the oil-bearing women bravely spread the message of the Resurrection.

Why do we go to the grave on the second day? St. Gregory of Datev explains it like this, “First, we are taught that the extent of mourn is until evening, and the morning to rejoice, as with God. Likewise, on the third day, first women should come to the grave and later the men, and all of them rejoice spiritually, just as the oil-bearing women first came to the grave and saw the Resurrected Christ, then the apostles came. Yesterday, they felt great pain for the dead one, and that great anguish was for God, but today we are content to come to the grave and extend our gratitude to God.” (St. Gregory of Datev, Winter Volume, Sermon for the departed aykouts 51)

According to the teachings of the doctors of the Holy Church, there are many reasons to remember the departed in the morning at the gravesite:

- The first man left the comforts of Paradise in the evening when the sun set, and they thought the darkness would always cover them, but they rejoiced on the following morning when the sun rose. In the evening, they were disgraced, and, in the morning, they were consoled with God’s angel, who proclaimed the coming of the Only-begotten.

- Man has two essences, spirit and body. Yesterday, they asked for forgiveness from the body, and today, for the spirit. Yesterday, they mourned together, and today by coming together, they consoled one another.

- The evening is this life; whoever cries here prepared to rejoice in the morning. The mystery of burial was yesterday, and this morning is the mystery of the resurrection. For this reason, we come back to the grave so that peacefully



we can pass the governance of darkness, and our judgment will be sweet.

- Ezekiel's illness brought him near death in the evening, and in the morning, Prophet Isaiah came and brought the morning of life, and happiness ruled. The Prophet Isaiah says, "For the people sitting in the darkness, light has dawned."

- In the evening, Lazarus' sisters slept in grief. In the morning, happiness was theirs.

- After putting the Lord Jesus in the grave, the Apostles slept in mourning, and in the morning, the women came, bringing the news and joy of Resurrection.

- Just as we plant the seeds under the ground and water them, in the same way, we bury the intellectual seeds in the evening under the ground. Today, again, with spiritual water, we have watered them so that they will bear the fruits of the Springtime Resurrection.

## **Seventh Day - Yotnorek**

The seventh day is calculated from the day of burial. In the past, up to the seventh day, they would visit the grave of the departed to offer prayers, and add earth to the grave, in increments. The seventh day, called "yotnorek," corresponds to the seventh day. The remembrance on this day and visiting the grave has many meanings. The seventh day symbolizes the following:

- God created the world and heavens in six days and finished His creative process and "...On the seventh day He rested from all His work. Then God blessed the seventh day and made it holy..." (Genesis 2:2-3). According to this symbolism, the Church has designated the Seventh Day service, where the departed's body finds its final resting spot in the earth.

- After Adam, the seventh was Enoch, who was taken to heaven in full body.

- Jacob, leaving Babylon, was in exile for six days and, on the seventh day, rested on the hills of Gilead (Genesis 31:20-23). Jacob's exile from Babylon is symbolic of our leaving this world with all good works with all of its intricacies. As for the Laban and his group, this is the battalion of demons, who go after the soul for six days until the soul reaches its resting place, in the spiritual abode on the seventh day.

- The Seventh Day symbolizes the seven graces of the Holy Spirit: wisdom, understanding, counsel, fortitude, knowledge, piety, and fear of the Lord.

- The Seven Sacraments of the Church: Baptism, Chrismation, Repentance, Holy Communion, Holy Orders, Matrimony, Extreme Unction.

- The Seven Christian virtues: chastity, temperance, charity, diligence, kindness, patience, and humility.

- The Seven Deadly Sins: pride, envy, anger, sloth, covetousness, gluttony, and lust.

- The Seventh Day is holy and a day of rest, representing the soul's eternal rest in God's kingdom. The Lord entered the grave on the sixth day of the week and dissolved corruption, in spirit descending into Hell, He freed the captives, and on Sunday, on the seventh day, He Resurrected and resurrected to the freed captives and took them to Heaven. For this reason, today, we ask that the Lord dissolve the corruption from the departed, free their spirit from aerial principalities, grant resurrection at the last day, and be worthy of eternal life. Since the Lord was resurrected on Sunday, we, therefore, pray for the departed on that day.

In the Seventh-day prayers, we ask the Lord that He mix the soul of the departed with the light beams of the martyrs and not be ashamed of him on the day of Judgement. We are

also asking that the demons have no authority over the soul of the departed, and under the guidance of a good angel, the departed arrive at the station of the just. We ask the Lord, in His goodness, to overlook the faults of the departed, and give them the boldness to stand before God and not enter the judgment with Him.

## **Fortieth Day - Karasunk**

The fortieth day is calculated from the day of passing, which is considered the first day. After the body has passed on, on the fortieth day, the spirit ascends to the worship of God and only then does the righteous Judge decide on their works, and the life lived on earth. Doing a service on the 40th day, of course, also has its meaning. The 40th day symbolizes:

- After the Resurrection of Jesus, for 40 days, He remained on earth and then Ascended next to His Father.
- In the time of Noah, for 40 days and 40 nights, it rained, and all creations perished.
- The Jews remained in the desert for 40 years.
- Moses remained with God for 40 days on Mt. Sinai, after which the Ten Commandments were given to humankind.
- Jesus, for 40 days and 40 nights, fasted in the desert, where for our salvation, He won the first battle against the devil.

The departed soul for forty days visits the heavenly habitations and abysses of hell, not knowing yet where it will remain. According to the revelation of the angel to St. Macarius of Alexandria, the Church's special commemoration of the departed occurs because up 40<sup>th</sup> day, the soul is shown the beauties of Paradise and torments of hell before being assigned on the fortieth day to the place where it will await the resurrection of the dead and the Last Judgment. On the 40th day, everything becomes plain to the departed, and

they learn where they will remain until the Second Coming of Christ and God's Judgement. This is why praying unceasingly during those 40 days is essential, remembering the departed person and spreading mercy in the persons' name. On this day, a requiem (hokehankist) is conducted.

The famous historian Eusebius witnesses the 40th-day service. This ritual was organized first by the Apostle Phillip. To deal with his own plight, he had requested that for 40 days continuously the Badarak be celebrated beginning on the day of his death because the Lord reprimanded him for his irritable bad temper.

We also know from the scriptures when souls come out of their bodies, they are at war with aerial demons, as Anthony the hermit and many other saints saw their visions. The Church believes that sinful humans, if they are baptized, when at the time of their death if they are worthy of pure, faithful confession, and 40 days after their passing, they are remembered with a Badarak before Jesus Christ, then that service can free the dead soul from the deep abyss.

## **Annual Remembrance - Darelits**

Since the early days of Christianity, it has been important to remember the departed on the anniversary of passing. The year is calculated according to the day of passing. It is helpful to request a requiem (hokehankist) on that day, invite the priest to the gravesite, and cense the grave while praying because it is from this site that the departed will be resurrected.

Armenian Christians with the names of the martyrs followed respectable traditions of the ancient churches. Offering annual hokehankist has become an accepted responsibility. But the Church has accepted the annual remembrance with one difference. She remembered the departed annually not as the heathens of the time by commemorating

their birthday, but their passing day, which is considered a true birth in God's kingdom. The day of death turns into a day of birth next to Christ, in new life.

Following the Feast Days of the Church, the "merelots" Badarak and hokehankist remind us that our Lord Jesus Christ was resurrected on Sunday. On Monday, He will resurrect His saints, and so we request that He remember our departed along with the saints. St. Gregory of Datev remarks, "We have to show mercy and pray for them, those who with hope and faith are asleep in Christ, and all the bits of the worldly errors that have remained with them. We also have to ask for the forgiveness of their sins, those who died suddenly in war, by beasts, weather, lightning, illness or other mishaps, who could not confess their sin or be worthy of holy matrimony."

Therefore, let each of us try to condition ourselves to pray with enthusiasm and from our hearts and with all virtues. With faith let us ask of the Lord, so that our inner man turn, even here, communicants of the Glory of God, so that our spirit communes with the holiness of the Spirit, so that here being cleanse from the dirty defilements, during the time of resurrection be worthy of eternal rest in the Heavenly kingdom and be taken up to heaven in the clouds, as is said, **"We will be taken up into the cloud to meet the Lord, and we will be with the Lord. Therefore, console one another with these words."** (I Thess. 4:16-17). May the Lord have mercy on all the departed, may they be worthy of eternal light and salvation, and with the Resurrection of Christ, may He console all those who mourn and grieve in spirit.

It is interesting to note one story, with St. Nicholas of Myra, the Wonderworker is visiting the grave of a child who had been in a stony area, and the ocean water covered the child. On Saturdays and Sundays, the child's mother would take flour, wine, and olive oil to the priest so that during the Badarak, the child would be remembered along with the

departed. And the child's guardian angel came and lifted all from the priest's hands and placed them before the child. And picking them up, the child ate, drank, and was content until the following week. When the tide changed directions and the stones were exposed, the mother saw that her child was healthy and inquired as to how it happened that the child was healthy? And the child told the story of all that happened. That is, all that was offered by the mother for the Holy Badarak, for the salvation of the child's soul, had turned into food and nourishment for the child.

### **Do either Easter or Holy Cross “cut” the 40-day Hokehankist?**

This question is fairly well spread among the people: Does Easter “cut” the 40 days of the departed, or not? No feast of the Church ever “cuts” the 7 day, 40 day, or annual rituals. If there are a few days left for the 40th day, and Easter or the Feast of Holy Cross takes place, it does not cut the 40 days. This only “cuts” the mourning. On Holy Easter, the departed family comes out of their mourning, but it is important to visit the grave of the departed. From the date of death, you must count 40 days and, on that day, conduct the 40th-day ceremony for the departed, without regard to the Easter Feast.

The day following each of the five tabernacle feasts is designated as Merelots, that is, Memorial Day, dedicated to those who have fallen asleep in Christ. The Badarak celebrated on Merelots testifies that Christ is the God of the living and the departed. After the Badarak hokehankist is performed, the names of the departed are remembered, after which the families visit the gravesites. Therefore, nothing can “cut” the intervals to the remembrance days. The 40 days are very definitive, just as the 40 years of the chosen people in the wilderness ended with them arriving to the promised land, just as

for 40 days Jesus was tempted in the wilderness and defeated the devil, just as for 40 days Noah's ark traveled over the flooded earth and arrived at Ararat, and in the same way, through the 40 days the souls of the departed arrive at their resting place.

Christians! Pray for your departed relatives; pray for each Christian because their souls receive rest through that grace.

*And so, learning this, without forgetting to remember the departed, as much as our ability permits, because God prepares for us through the intercession of others. And may God dawn His glory and light of knowledge in your soul. Hence, you care for your and your departed souls, and also so you deny the pleasures of the world and love God's glory, without forgetting you keep before your eyes God and His awful Court, rest for the just and suffering for the sinners, as well as you work goodness in this life. You arrive at the inexpressible heavenly kingdom with all the loved ones with your departed with the grace of our Christ God, Who is always blessed with the Father and Holy Spirit, now and always forever and ever. Amen.*

Vartan Aykegtsi "Khradner," Ganzasar,  
Yerevan 1999 page 39.

**Prayer for all those who are asleep (in Christ)  
And especially for families and the youth**

*O compassionate God, I implore and ask of You for all the departed of our nation, old and new, who have their faith and hope in You. And especially those who are asleep close to You, my physical and spiritual parents, brothers, sisters, relatives, loved ones, friends, the spiritual doctors who teach our faith, instructors, our workers, our benefactors so that on the day of Your coming you remember with mercy and grace forgiveness of all their sins and faults. You place them with the saints at Your right hand and allow them to hear your blessed words, "Come to me, blessed of My Father." And, according to the kindness shown toward us, in the place of one Your reward plentifully their souls, and make us free from their debts. To You glory, forever and ever. Amen.*

Catholicos Simon of Yerevan,  
"Aghotagirk," Yerevan, 2005, chapter 5, page 57.